

Վանի թագավորների արձանագրություններում վկայված են նթիու երկ-
րի մոտ հարյուր երեսուն տեղանուններ, որոնց մի զգալի մասը, ենթարկվելով
հնդեվրոպական հայերենին բնորոշ լեզվական օրինաչափ ձևափոխությունների,
պահպանվել և հասել է մեզ: Այդ վկայված տեղանուններից շատերի ճշգրիտ
տեղորոշումը սեպագրական այլ կարգի տվյալների բացակայության պայ-
մաններում, հնարավոր է դառնում միայն հայերենում պահպանված զուգա-
հեռների շնորհիվ: Արձանագրություններում եղած նթիույան տեղանունների
հայկական զուգահեռների բացահայտումը, տեղագրությունների ճշգրտումը
մշտապես գտնվել են մասնագետների ուշադրության կենտրոնում, որոնց
առաջարկած զուգահեռների մի մասը նթի ժամանակի քննությանը չի դիմա-
ցել, ապա մյուս մասն ընդունվել է հետազոտի բոլոր հետազոտողների կող-
մից և մտել գիտական շրջանառության մեջ: Համընդհանուր ընդունելության
արժանացած այդպիսի զուգահեռներից կարելի է նշել հետևյալները*.

¹Qulia > Կուլիշան, ¹KUR Erlahe > Երասի, URU Ahurlane > Ախուրեան¹,
¹KUR Qatarza > Կղարշ², KLR Zabaha > Ջավախ³, ¹KU? Abellanehe > Աբեղ-
եան⁴, KUR Urtehe > Լիրցախ, KUR Uelekune/he > Գեղաքունի, URU Zua / Zua-
ne / > Ջիվին⁵, URU Haldere > Զլդր⁶, KUR Teria > Երի⁷, URU Erebone > Երեւան

* Հնդկական լինելու դեպքում այն զուգահեռները, որոնք հիմնավորված չեն լեզվական քննու-
թյամբ:

¹ М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», М., 1986, с. 72, 88, 92).

² J. Marquart, *Erānšahr nach der Geographie des Ps. Moses Xorenac'i*, Berlin, 1901, S. 163.

³ Հ. Ստալշյան, Ասորեստանյա և պարսիկ սեպագիր արձանագրությունք կամ ֆոնի քաղվածք, որոնք նախի-Ուրարտու աշխարհին պատմության կը վերաբերին, Վիեննա, 1901, էջ 44:

⁴ Կ. Հ. Բասմաշյան, Հայ նախարարությունները բևեռաձև արձանագրությանց մեջ («Բանասեր», Փարիզ, 1902, № 7—9, էջ 239):

⁵ Г. А. Капанцяи, *Cheilo-Armenlaca*, Ереван, 1931, с. 104; նույնի՝ Историко-лингвистическое значение топонимии древней Армении, Ереван, 1940, с. 22
նույնի՝ Хайаса—колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ере-
ван 1947, с. 181. URU Zua (Zualn) > Ջիվին անցման վերաբերյալ Գ. Ղափանցյանի
հայտնած տեսակետը, անկասկած, ծանոթ է եղել ն. Հարությունյանին, որը, սակայն, իր աշ-
խատություններում բազմիցս խոսելով այդ զուգահեռի մասին, անտեսում է այդ տեսակետի
հեղինակին, այդպիսով իրեն վերագրելով համեմատության բացահայտման առաջնությունը:

[Կ'ն Н. В. Арутюнян. Блайниги (Урарту), Ереван, 1970, с. 416—417; նույնի՝
Топонимика Урарту, Ереван, 1985, с. 83—84]:

⁶ Г. А. Меликшивили, Урартские клинообразные надписи (այսուհետև՝ УКН), М., 1960, с. 428.

⁷ Ս. Տ. Երեմյան, Ն. Մանր և VII դարի հայոց «Աշխարհացոյց»-ը («Մանր և հայագի-
տության հարցերը», Երևան, 1968, էջ 82):

URU Alištu>Աղստե⁸, KUR Abune>Համունիք, KUR Giarnia>Գասնի, KUR
Suluqu>Շուկ⁹, ¹/KUR Uiteruhe>Գուգարք, KUR Gurla>Գորիս, ¹/KUR Ar-
quqe>Արկիճի, KUR Qurlane>Կարանկու, *Qatzuane>Կազգուան, KUR Ubur-
da>Հորարձի, URU Amigu>Ամոշ, URU Erdua>Արդվի, URU Eruia>Երզնվանք
URU Urkia>Արքնվան¹⁰, KUR Iarasu>Երեզ¹¹, URU Gelaine>Գեղամ¹²,

Որոտ երեք տասնյակի հասնող այս զուգահեռների լեզվական քննու-
թյամբ զբաղվել է Հ. Հ. Կարազյուզյանը¹³,

Նախկինում մեր կողմից առաջարկված և լեզվական քննությամբ հիմ-
նավորված եթիմոլոգիան URU Arda>Վարդո, KUR Didene>Դոդան (Դոտան), KUR

Blane>Վանանգ¹⁴ և URU Amuša>Մոզն¹⁵ զուգահեռներից բացի, մեզ հաջողվել
պարզել սեպագիր վկայված ևս քսան տեղանունների ճշգրիտ տեղորոշումը¹⁶,
որն ապացուցվում է ոչ միայն դրանց անունների պահպանված ձևերի լեզվա-
կան անցման հնարավորությամբ, այլ նաև սեպագրական ու պատմաաշխարհ-
ագրական ալլ կարգի տվյալներով:

Այդպիսի տեղանուններից են.

1. URU Bute: Հանդիպում է միայն միկ անգամ՝ Արգիշթե I-ի Խորխոռ-
յան ատրեգրության առաջին տարվա դեպքերի նկարագրության մեջ, հետև-
աբար հատվածում. uštade 'Tejauehinede LUGÁL 'Tejauehe mannudube hau-
be KUR Šeriaze... kujeade pare URU Bute salmathe KUR Blane KUR Hušane
'aaldube andane KUR Tariune¹⁷, այսինքն՝ «Արշավեցի Տելավեխե (ցեղի)
վրա: Արքային Տելավեխե (ցեղի) հպատակեցրի (?), գրավեցի Շերիազե (եր-
կիրը), ...կարում էի մինչև Բուժե (քաղաքը): Բուն (?) Բիա (և) Խուշա եր-
կրները անշատեցի (?) ամբողջը (?) Թարիու (երկրից)»¹⁸:

Ինչպես տեսնում ենք, URU Bute-ն հիշատակված է Տելավեխե, Շերի-
ազե, Բիանե, Խուշա և Թարիու երկրների հետ, որոնցից, քանի որ ճշգրիտ-

⁸ Մ. Ա. Իսախանյան, Երկու ուրարտական նոր արձանագրություն (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր»
(հաս. գիտ.), 1951, № 8, էջ 97, ծան. 2), նույնի՝ Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն,
Երևան, 1971, էջ 189:

⁹ Н. В. Арутюнян, Бкайнили..., с. 401—402, 427, նույնի՝ Արգիշթե II-ի նո-
րահայտ սեպագիրը («Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 3, էջ 102):

¹⁰ Հ. Հ. Կարազյուզյան, Արեւելյան Հայաստանի ուրարտական տեղանունները (ՀՍՍՀ
ԳԱ «Լրագիր», 1978, № 10, էջ 55—76):

¹¹ Հ. Հ. Կարազյուզյան, Ուրարտական նորահայտ գաղափարագրեր (ՀՍՍՀ ԳԱ
«Լրագիր», 1978, № 2, էջ 69):

¹² О. О. Карагезян, Города Ирдани-3250 лет (ՀՍՍՀ ԳԱ «Լրագիր» հասարա-
կական գիտություններ, 1983, № 1, էջ 68, ծան. 48):

¹³ Տե՛ս Հ. Հ. Կարազյուզյանի վերոհիշյալ հոդվածները:

¹⁴ Վ. Ա. Գալսեթյան, Սեպագիր աղբյուրներում հանդիպող մի քանի երկրների տե-
ղորոշումները («Պատմա-բանասիրական հանդես», 1985, № 1, էջ 208—214):

¹⁵ Վ. Ա. Գալսեթյան, Արգիշթե II-ի Սիսիանի արձանագրությունը (ՀՍՍՀ ԳԱ «Լրա-
գիր» հասարակական գիտություններ, 1985, № 6, էջ 78—79):

¹⁶ Սույն հոդվածում տալիս ենք ութ տեղանունների տեղորոշումը:

¹⁷ YKH, № 127, I, տող 8—9; F. W. König, Handbuch der chaldäischen Inschriften
այսուհետև՝ HChI, Graz, 1955—1957 № 80, § 1, IV.

¹⁸ Թարգմանությունը՝ ըստ Հ. Հ. Կարազյուզյանի {տե՛ս Հ. Հ. Կարազյուզյան,
Ուրարտական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի և հարևան պետությունների մասին,
[«Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի» (այսուհետև ՈԱ), Երևան, 1981, № 22,
էջ 58]}:

ված և ապացուցված է 'Tejauehe>Տալքի¹⁹, KUR Tarlu>Դարոյնրի²⁰ և KUR Blane>Վանանգի²¹ տեղորոշումը, հետևաբար Բութե քաղաքը ևս պետք է փնտրել մոտավորապես նույն վայրերում, ուր գտնվում էին այդ երեք երկրները: Հարվի առնելով ինչպես այդ հանգամանքը, այնպես էլ լեզվական անցման հնարավորությունը, հնարավոր ենք համարում առկայությունը Bute>Բող-Բերդ գոգահեռը, որը կարող էր կատարվել հետևյալ կերպ. ինչպես դիտենք, ո/օ/ ձայնավորը սեպագրում արտահայտվել է ս/ու/ նշանով²², իսկ ի-ն հնչյունափոխության ենթարկվելով, վերածվել է լ-ի, որն էլ հայերենին բնորոշ հնչյունափոխությունը սվել է -դ/ լ> լ> լ> լ> լ հնչյունափոխությունը, որպես հրեղեկվորական հայերենին բնորոշ մի երևույթ, նկատելի է նաև Հայկական լեռնաշխարհի այլ տեղանուններում, ինչպես օրինակ, KUR Qatarza>*Qalarza>Կղարջք, *Qatzuane>*Կալզուան>*աղզուան²³, աքաղ. 'Tuqdaml>հուռ. Λύγαμυς²⁴, Այսպիսով, լ> լ> լ հնչյունափոխությունը և վերջին կիսաձայն լ-ի անկմամբ կոտացվելը Բող որը և վկայված է Բողբերդ ձևով²⁵:

Բողբերդը գտնվել է Հայաստանի՝ 387 թ. առաջին բաժանման գծի վրա, պարսկական մասում և, ըստ Ն. Գ. Ադոնցի, տեղադրվում է Ղարդարազարի (= Միրանյաց) լեռներում, Տալքի Բուխա գավառի և Բասենի միջև գրտնրող ներկայիս Բուա-Կալա բերդի տեղում²⁶: Բողբերդը վաղ միջնադարում եղել է Հայաստանի նշանավոր բերդերից մեկը և կարևոր դեր է խաղացել V դարում, Վահան Մամիկոնյանի ապստամբության ժամանակ:

Այսպիսով, քանի որ Bute-ն լեզվական օրինաչափ անցմամբ տալիս է Բող ձևը, և վաղ միջնադարյան Բողբերդի գոյությունը տվյալ վայրերում թույլ է տալիս մեզ սեպագրի վկայված այդ քաղաքը տեղադրելու Բողբերդի տեղում, ի տարբերություն մյուս հեղինակների, որոնք այն տեղադրում են Չղբը լճից հարավ-արևմուտք²⁷ կամ էլ Տելավեխե-Տալքից արևմուտք²⁸:

2. URU Uzínabitarna: Հանդիպում է մեկ անգամ Արգիշտի լ-ի տարեգրության վերոհիշյալ հատվածի շարունակության մեջ, ուր ասվում է՝...ustade KUR Zabahaē edia haube KUR Zabahaē šile kuṭeade pare URU Uzínabitarna

¹⁹ Tejauehe ընթերցումը նախկինում ընդունված Diauhի-ի փոխարեն, ինչպես նաև Tejauehe>Տայք անցման լեզվական հիմնավորումը ավել է Հ. Հ. Կարազյոզյանը [տե՛ս Հ. Հ. Կարազյոզյան, Սեպագիր աղբյուրների Դասանու երկիրը (2002 ԳԱ «Լրաբեր», 1978, № 6, էջ 67-94), նույնի՝ Արևելյան Հայաստանի..., էջ 55-56]:

²⁰ KUR Tarlune>Դարոյնք անցումը առանց լեզվական փոխության առաջարկում է Ն. Վ. Հարությունյանը (տե՛ս Н. В. Арутюнян, Бнайнили..., էջ 408; նույնի՝ Топонимка..., էջ 177): Թարիու երկրի տեղադրության մասին տե՛ս Վ. Ա. Գալսերյան, Սեպագիր աղբյուրներում հանդիպող..., էջ 212-213):

²¹ Նույն տեղում, էջ 213:

²² И. М. Дьяконов, Языки древней Передней Азии, М., 1967, с. 124, прим. 19.

²³ Qatarza>Կղարջք և Qatzuane>Կաղզուան անցումների լեզվական հիմնավորման մասին տե՛ս Հ. Հ. Կարազյոզյան, Արևելյան Հայաստանի..., էջ 60-61, 70-71.

²⁴ И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, с. 240, прим. 3, с. 285, прим. 1.

²⁵ «Ղաղար ֆարպեցու լ պատմությունը Հայոց և թուրք առ Վահան Մամիկոնյան», Տփղիս, 1904, էջ 146:

²⁶ Н. Г. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 24-26.

²⁷ УКН, с. 436.

²⁸ Н. В. Арутюнян, Бнайнили..., с. 406.

KUR Siremutara ³⁰ babane³¹, այսինքն՝ «...արշավեցի Ջաբախյան (երկրի) վրա, գրավեցի Ջաբախյան (երկրի) գավառը (°): Կտրում էի մինչև Ուզի-նարիթարսա (քաղաքը), մինչև Սիրեմաթարա (երկիրը) (և) լեռը»³²:

Այս համալսածի KUR Zabaha երկրանունը, ինչպես վերևում ասվեց, նույնացվել է Գուգարք նահանգի Ջավախք գավառի անվան հետ, սակայն երկիրը տեղադրվել է ոչ թե պատմական Ջավախքի տարածքում, այլ դրանից հարավ կամ հարավ-արևմուտք, այսինքն՝ Չլզըր լճից արևմուտք, հարավ-արևմուտք կամ էլ հյուսիս-արևմուտք³³, նման տեղորոշումը որևէ կերպ չի ապացուցվում, բանի որ ոչ վերոհիշյալ հատվածները, ոչ էլ ամրոշող տարեգրությունը այդպիսի հնարավորություն չեն ընձեռում, իսկ ուրիշ արձանագրություններ էլ KUR Zabaha հրկրի հիշատակությամբ առայժմ մեզ հայտնի չեն, ուստի այն պետք է տեղագրել միմիայն պատմական Ջավախքի տարածքում, որը համապատասխանում է ներկայիս Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջաններին:

Գրավելով KUR Zabaha > Ջավախքը, Արգիշթի I-ը այնուհետև կտրում է (այսինքն՝ գրավելով հասնում է) մինչև Ուզինարիթարսա քաղաքը և Սիրեմաթարա երկիրը (և) լեռը, որոնք ևս մասնագետները տեղագրում են Չլզըր լճից հարավ-արևմուտք կամ արևմուտք, այսինքն՝ ճիշտ այնտեղ. ուր տեղադրում են Ջաբախա երկիրը, կամ էլ նրա անմիջական հարևանությամբ³⁴:

Նման մոտեցումը հարցին արդյունք է, առաջին հերթին, Ջաբախա > Ջավախքի ոչ ճիշտ տեղորոշման և հետո, հոր արձանագրության մեջ հայտարարվում է որևէ բնակավայրի (երկիր, քաղաք) գրավման մասին, իսկ շարունակության մեջ ասվում, թե կտրեցի մինչև մյուս բնակավայրը, այդ դեպքերում միշտ չէ, որ նշված երկու բնակավայրերը միմյանց հարևանության մեջ պետք է փնտրել: Այսպես, օրինակ, Նույն տարեգրության կրկնօրինակի

հատվածներից մեկում տվում է՝ ...haube ^{URU} Qehune KUR silunine šuinia bede kušelade pare ^{URU} Allišu³⁵, այսինքն՝ «...գրավեցի Կեխունե (քաղաքի): (ձորա) փոր (?) (երկիրը) ծովային գավառում: Կտրում էի մինչև Ալիշտու (քաղաքը)»³⁶, ինչպես պարզ երևում է այս օրինակից, Կեխունե քաղաքի երկիրը (տեղադրվում է Սեանա լճի հյուսիս-արևմտյան ափին, ներկայիս Լճաշեն գյուղի և նրան կից տարածքներում)³⁷ և Ալիշտու > Աղստե³⁸ քաղաքը (տեղադրվում է Աղստե գետի ստորին հոսանքներում, Կուր գետին միախառնվելու տեղից ոչ հեռու)³⁹ ոչ միայն կից չեն, այլ դրանց միջև հեռավոր

³⁰ УКН № 127, стр. 9—10; НСНІ, № 80, § 1, IV (սւր ^{GĒN} babane—^{KUR} babane).

³¹ Բարգմանությունը մերն է:

³² Г. А. Меликишвили, Днаухи («Вестник древней истории, 1950, № 4, с. 27, прим. 4, УКН, с. 446; Н. В. Арутюнян, Бияйнили..., с. 195, прим. 41; նույնի՝ Топонимика..., с. 76—77.

³³ Г. А. Меликишвили, նշվ. հոդվ., էջ 28, ծան. 4, УКН с. 446, Н. В. Арутюнян, Бияйнили..., с. 195; նույնի՝ Топонимика..., с. 170, 200.

³⁴ УКН, № 128, А 2, стр. 10—12; НСНІ, № 81, § 1, № II.

³⁵ Բարգմանությունը ըստ ՈւՍ, № 22, էջ 80:

³⁶ УКН, с. 437; Б. Б. Пиотровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 68.

³⁷ Տե՛ս վերևում:

³⁸ Այս մասին տե՛ս է. Վ. Խան-գադյան, Կ. Լ. Մկրտչյան, է. Մ. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 57—58, Լ. Լ. Կարազյոզյան, Արևելյան Հայաստանի..., էջ 75:

րությունը կազմում է հարյուր կիլոմետրից էլ ավելի: Կամ էլ Մովսիս արձանագրության մեջ հիշատակված է Ուրտեխե երկիրը, ուր Սարգուրե II-ը կրտսերի-հասել էր Արկուկեն դրավելուց հետո³⁸, Նվ քանի որ Ուրտեխեն նույն Արցախն է³⁹, իսկ Արկուկեն՝ ներկայիս Մարտունու շրջանի Արկիճի դեպի հովիտը⁴⁰, ապա այս դեպքում ևս երկու երկրների հեռավորությունը հասնում է մինչև հարյուր կիլոմետրի:

Հետևաբար, URU Uzínabitarna քաղաքը և KUR Siremutara GEN babane երկիրը (և) լեռը կարող էին գտնվել ոչ միայն Ջաբախա—Ջավախքի անմիջական հարևանությամբ, ինչպես հակված են կարծելու մաս աղետները, այլ դրանից բավական մեծ հեռավորության վրա և նույնիսկ մոտ հարյուր կիլոմետրանոց շառավղով:

Հարցին մոտենալով նման տեսանկյունից, ինչպես նաև հաշվի առնելով այդ երկու տեղանունների հետազայում ևս պահպանված լինելու հնարավորությունը, փորձենք ճշտել URU Uzínabitarna քաղաքի, KUR Siremutara երկրի և նույնանուն լեռան տեղագրությունը:

Դեռևս Գ. Ղափանցիանը, առաջին տեղանունն ընկելով որպես բարդ բառ՝ Uzina և bitarna այն թարգմանել է «Ուղինա-բերդ» (այնպես, ինչպես Kul-bitarne «Կող-բերդ») և տեղագրել էր գրումից հյուսիս՝ Օձնի քաղաքի տեղում, իսկ KUR Siremutara անունը թարգմանելով «Սիրեմաձոր», համեմատել է այն Սրմանց (Բյուրակնյան) լեռների հետ⁴¹: Սակայն, քանի որ Արգիշթե I-ը իր արշավանքը սկսել էր հարավից՝ հենց Սրմանց (Բյուրակնյան) լեռների շրջանից⁴² և, շարժվելով դեպի հյուսիս, հասել էր մինչև Ջաբախա >Ջավախք, բնականաբար, նորից ետ հարավ, չէր արշավի, ուստի այդպիսի տեղագրությունը բացառվում է:

Առավել հավանական է, որ Uzina-bitarna քաղաքը, Siremutara երկիրը և լեռը գտնվեին Ջավախքից արևմուտք, հյուսիս և կամ էլ արևելք ընկած շրջաններում: Ահա հենց վերջին ուղղությամբ, Ջավախքից ոչ շատ մեծ հեռավորության վրա է գտնվում Օձուն բնակավայրը, որի անունը, հավանաբար, առաջացել է սեպագրում վկայված Uzina ձևից, ենթարկվելով հայերենին բնորոշ հնչյունափոխության օրինաչափ յերևույթներին: Uzina > Օձուն անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ. ինչպես ասացինք, ո/օ/ հընչյունը սեպագրում արտահայտվում է u/ու/ նշանով, շ-ն հայերենում կանոնավոր կերպով տալիս է -ձ⁴³, իսկ բառամիջում —[ն՝ ու⁴⁴ {ինչպես (KUR Enzi'e > Անձիտ)⁴⁵, [D/KUR zi (u) qune > *ձուկուն > ձուկն],⁴⁶ [Urzana⁴⁷ (անուն) >

³⁸ YKH, № 161; HChI, № 105.

³⁹ Տե՛ս ծան. 5.

⁴⁰ Զ. Զ. Կարաբյուրյան, Արևելյան Հայաստան..., էջ 67:

⁴¹ Գ. Ա. Ղափանցիան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 40, նույնի՝ Историко-лингвистические работы, Ереван, 1975, с. 106—107.

⁴² Այս մասին տե՛ս Վ. Ա. Գալսերյան, Սեպագիր աղբյուրներում հանդիպող..., էջ 210—211, 214:

⁴³ Այս մասին տե՛ս նաև Զ. Զ. Կարաբյուրյան, Արևելյան Հայաստան..., էջ 61, 63:

⁴⁴ Նույն տեղում, էջ 57—58:

⁴⁵ Ք. Պ. Պատկանյան, Վանի արձանագրությունները և նրանց նշանակությունը Առաջավոր Ասիայի պատմության համար, Թիֆլիս, 1883, էջ 48:

⁴⁶ Գ. Բ. Ջահուկյան, Հայկական չերտը ուրարտական դիցարանում («Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 1, էջ 52—53):

⁴⁷ YKH, № 264; HChI, № 122.

Արձան⁴⁸ (քրմապետի անուն)], (¹KUR Uiteruhe > Գուգարք, ^{URU} Sasine > Մա-
սուն, ¹Miša > Մուշէ և ալլն⁴⁹); Այսպիսով, կատարվել է *Ոձունա և վերջին
անշեշտ a-ի անկմամբ՝ *Ոձուն, որը և վկայված է Օձուն ձևով⁵⁰:

Օձունը գտնվում է Uiteruhe > Գուգարքում (Տաշիր գավառ), որի նվաճ-
ման մասին խոսվում է Արգիշթեի տարեգրության և նրա կրկնօրինակի դեպ-
քերի հետագա նկարագրության մեջ⁵¹: Այս փաստը լիաքննիչ ապացույց է
^{URU} Uzina > Օձուն դուգահեռի օգտին:

3. Եվ եթե Uzina > Օձունը գտնվում էր Գուգարքում, ապա հետաքրքիր է
նաև Siremutara երկրի և լեռան տեղագրությունը: Ինչպես վերևում ասվեց,
Գ. Ա. Ղափանցյանը ալդ տեղանունը ևս համարելով բարդ բառ՝ Siremu ե
tara հիմքերով, թարգմանում է «Սերեմա-ձոր» և համեմատում այն Սրմանց
(Բյուրակնյան) լեռների հետ: Մեր կարծիքով, tara բառի «ձոր», «կիրճ»
թարգմանությունը ճիշտ չէ: Այն հավանաբար կապ ունի արձանագրություն-
ներից հայտնի tarae⁵² բառի հետ, որը Գ. Մելիքիշվիլին թարգմանում է
«հզոր», «ուժեղ» չշատ⁵³, իսկ Հ. Կարապետյանը՝ «բարձրաբերձ»⁵⁴, Մյուս
կողմից՝ tara-ն կապվում է ^DTar-ra-l-né⁵⁵ դիցանվան և ^{KUR}Tar-ra- []⁵⁶ տե-
ղանվան tarr հիմքի հետ, որը Գ. Զահուկյանը համեմատում է արդի գրական
լեզվում և բարբառներում պահպանված «թառ» արմատի հետ, որը հնդեվրո-
պական ծագում անի և նշանակում է «հավի (թռչունների) թառ», «զառիվեր,
բարձր տեղ», «բարձունք»⁵⁷ և ալլն: Եվ քանի որ վերջին երկու թարգմա-
նությունները էականորեն չեն տարբերվում, ուստի ^{KUR}Siremu tara ^{GEN}ba-
bane արտահայտությունը կարելի է թարգմանել «Սերեմու բարձր (աբերձ)
(երկիրը) (և) լեռը»⁵⁸: Ուշագրի քննության ենթարկելով Ջավախքի արևել-

⁴⁸ Արձան քրմապետի անունը հիշատակվում է Հովհան Մամիկոնյանի «Պատմություն
Տարսնոյ աշխատության մեջ (Երևան, 1941, էջ 78) և ալլուր՝ Urzana > Արձան նույնացման
մասին տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 215, նույնի՝ Հայոց
լեզվի պատմություն, Հին շրջան, Երևան, 1961, էջ 134:

⁴⁹ Զ. Զ. Կարապետյան, Արևելյան Հայաստանի..., էջ 57—58:

⁵⁰ «Ս ա ճ փ ա ն ո ս ի Տ ա ր ո ն ե ց ւ ո յ Ա ս ո ղ կ ա ն Պ ա տ մ ո թ ի ն Տ ի ե ղ ե ր ա կ ա ն», Պետեր-
բուրգ, 1885, էջ 164:

⁵¹ YKH, № 127, I, стр. 12, HChI, № 80, § 1, VI; YKH, № 128, B1, стр. 37; HChI,
№ 82, R, VIII.

⁵² YKH, № 19, ուր. տող 11 և ալլուր:

⁵³ YKH, c. 408.

⁵⁴ ՈՒԱ, № 8, էջ 48.

⁵⁵ YKH, № 27, стр. 8, 43; HChI, № 10, II, տող 8, X, տող 43.

⁵⁶ YKH, № 127, стр. 28; HChI, № 80, § 2, V.

⁵⁷ Գ. Բ. Զահուկյան, նշվ. հոդվ., էջ 51:

⁵⁸ Նույն ձևով է կազմված նաև ^U[^{RU}]Ma-[qu]-ú-tar-[a] տեղանունը, որը Գ. Մելիքիշ-
վիլին ընթերցում է ^U[^{RU}]u (?)-(qu)-ru tar-[a-e] և թարգմանում «Մեծ քուղուրու քա-
ղաքը» (տե՛ս YKH, № 20, ա. c., стр. 11), իսկ Ֆ. Քյոնիգը՝ ^U[^R]U Ma-qu-ru-tar-[a?] «Մա-
կուրութաբա (քաղաք)» (HChI, № 6, (6a), V: Տվյալ դեպքում Ֆ. Քյոնիգը ճիշտ է ընթեր-
ցում — ma սեպը, որը պարզորոշ երևում է արձանագրության ClCh-ում (G. F. Leh m-
a n n-H a u p t, Corpus Inscriptionum Chaldicarum, Leipzig. 1928) բերված լուսանկա-
րում (13, N), սակայն նա ևս տեղանվան երրորդ սեպաթուրը ru ընթերցելիս հաշվի չի

լան, հյուսիսային և արևմտյան կողմերում գտնվող բարձր լեռների, լեռնաշղթաների հետևյալ անունները, ինչպես նաև հաշվի առնելով և՛ լեզվական անցման հնարավորությունները, և՛ այն համագամանքը, թե մինչև ուր կարող էր «կարել-հասնել» Արգիշթի I-ը Zababa ևրկիրը գրավելուց հետո, հնարավոր ենք համարում անցկացնել Sirenu > Սուրամ գոգահեռը, Անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ. ինչպես ասվեց վերևում, 1(ի) հընչունը փակ վանկում տալիս է ու, Բառամիջում Ե-ն տալիս է ձ(ա), որն ապացուցված է հիմնավորապես⁵⁹ և որից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ (^{KUR}Urtebe > Արցախ, ^{KUR}Uelekune > Գեղաքունի, ^{1/KUR}Uiterube > Գուգարք և այլն), Այսպիսով, կառացվի *Suranu (Սուրամ) և վերջինս u/ու/-ի անկամբ, որը կարող է տեղի ունենալ ինչպես տքադերենից և ուրարտերենից անցած հասարակ գոյականներում (օրինակ՝ աքադ. kurru > հայ. «կուպր», տքադ. kunru > հայ. «քարամ»,⁶⁰ ուր. ultu > հայ. «աղտ»,⁶¹ այնպես էլ հատուկ անուններում (օրինակ՝ ար. վկայված ¹Batu > հայ. Բատ⁶², ^{URU}Amigu > հայ. Ամիգ⁶³), կառացվի Սուրամ վկայված ձևը⁶⁴, որն առ այսօր պահպանվել է ինչպես լեռնաշղթա ի, այնպես էլ այդ լեռնաշղթան հասող լեռնանցքի, լեռնանցքի մոտաքր հարավից սկիզբ բերող և նրա մոտով հոսող գետի անուններում:

Ինչպես տեսնում ենք, Saranu > Սուրամ գոգահեռը լիովին համապատասխանում է ուրարտա-հայկական լեզվական անցման օրինաչափություններին, ինչը և հնարավորություն է տալիս այդ անունը տեղորոշելու ներկալիս Վրացական խՆՀ-ում գտնվող Սուրամ բնակավայրի տեղում: Զավախքից Սուրամ հասնելու համար Արգիշթի I-ը կարող էր ընտրել երկու հիմնական ճանապարհներից մեկը. առաջինը, Թեղքի լեռնաշղթան հատելով,

առել երեք ուղղահայաց մեծ սեպերի և հաջորդ՝ la: Նշանի միջև գտնվող հորիզոնական երկու փոքրիկ սեպերը, որոնք նույնպես հստակ երևում են լուսանկարում և որոնց զոյու-թյունը բացառում է ԴԱ լեռներից⁶⁵ և հոշում, որ այդ սեպախումբը պետք է ընթերցել u/ու/ Այսպիսով ավյալ սեպախումբը պետք է ընթերցել ^U[¹U]Ma-[qu]-ú որը անկասկած, հետագայի հայկական Մակու բաղաբի (տե՛ս «Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայր», Պետերբուրգ, 1887, գլ. ԺԴ), սեպագրով վկայված ձևն է: XVII դ. թուրք ճանապարհորդ էվլիա Չելեբին Մակու բերդաքաղաքը նկարագրելիս, գրում է. «...Այդ կառույցը գետի ափին է, ներքևում նեղ և վերևում լայնացող: Դա բարձր, մինչև երկինք հասնող ամրոց է, առանց արվարձանների, բոլոր կողմերից անառիկ» (տե՛ս Эвлия Челеби, Книга путешествий М., 1983, С. 167): Այս նկարագրությունից պարզ է դառնում նաև ^{URU}Maqu tara արտահայտությունը, որը նշանակում է «Մակու բարձր (արբեր)» (քաղաք):

⁵⁹ Г. А. Капанцян, Историко-лингвистическое значение топонимики древней Армени, Ереван, 1940, с. 69—73; О. О. Карагёзян, Локализация урартского царского города Арцашку (ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 5, էջ 69—73),

⁶⁰ Ն. Գ. Ագանց, Հայաստանի սլավոնիզմներ, Երևան, 1972, էջ 390—391,

⁶¹ И. М. Дьяконов, Материалы к фонетике урартского языка («Вопросы грамматики и истории восточных языков», М.—Л., 1958, с. 33).

⁶² О. О. Карагёзян, Локализация..., с. 78.

⁶³ Զ. Զ. Կարապետյան, Արևելյան Հայաստան..., էջ 71.

⁶⁴ Plinius Secundus, Naturalis historiae, Cambridge-Mass.-London, 1950—1962 (Loeb classical, VI, cap. 14); Платон Иосселиани, Горнда существующие и существующие в Грузии, Тифлис, 185), с. 62.

դուրս է գալիս Բորժոմի կիրճը և Կուր գետին համընթաց հասնում մինչև Սուրամ, իսկ երկրորդը՝ ուղղակի Կուր գետի եզերքով, ներկայիս Ախալցխայի մոտով և նորից Բորժոմի կիրճով մինչև Սուրամ: Թե ո՞ր ճանապարհն է ընտրել Արգիշթեն, դժվար է ասել, սակայն առավել հավանական է առաջին ուղին, որն ավելի կարճ է և ավելի մատչելի՝ մեծաքանակ զորքեր տեղափոխելու համար: Արգիշթեն իր այս արշավանքով, որի վերջնակետը եղավ Սուրամ րնակատեղին (լեռը, լեռնանցքը), հավանաբար մեկ հիմնական նպատակ էր հետապնդում, այն է՝ ծայրից ծայր նվաճել Եթիու երկիրը և վերջնականապես հնազանդեցնել եթիույան համարվող բոլոր ցեղերին:

Թեև հյուսիսային ուղղությամբ Եթիու երկրի և եթիույան ցեղերի տարածման սահմանները առաջին հայացքից կարող են անհավանական թվալ, սակայն Siremu > Սուրամ գուգահեռից բացի կան այլ կարգի բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են այդ իրողությունը: Այսպես, ինչպես գիտենք, Մոսխական լեռների հարավային մասը Ախալցխայի շրջանից սկսած, Բորժոմի կիրճով մինչև Սուրամ, վրացական աղբյուրներում հայտնի է որպես մեսխերի երկիր⁶⁵: Ի. Դյակոնովը հնարավոր է համարում, որ այդ մեսխերը դեպի Փոքր Ասիա արշաված հնդեվրոպացի թրակա-փոյուգիական ցեղեր էին, որոնք հետագայում դարձան վրացախոս⁶⁶, Հայտնի է, որ վրացական իշխանության տարածման հետ աստիճանաբար վերացավ նաև Զավախքի հայ բնակչությունը, «որոնց, սակայն, մեսխերի հետ միասին հնարավոր էր տարբերել հայերից»⁶⁷: «Հայերը, մեսխերը, ջավախքիցիները, կախեթցիները և քարթլինցիները, ի տարբերություն վրացիների, պատկանում են նույն՝ արմենոիդ կամ առաջավորասիական մարդաբանական տիպին»⁶⁸: Պետք է կարծել, որ ճիշտ են նաև այն հեղինակները, որոնք վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխ» անվան հիմքում տեսնում են նույն այդ մեսխ ցեղին⁶⁹, իսկ Մոսխական լեռնաշղթան՝ սահման հայերի և իբերների միջև⁷⁰:

Վերոհիշյալ բոլոր փաստերը գալիս են ապացուցելու, որ Արգիշթե I-ի արշավանքի ժամանակ եթիույան (=հայկական)⁷¹ ցեղերի տարածման սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Մոսխական լեռնաշղթայի հյուսիսարևելյան ծայրամասը, ուր գտնվում էին Siremu > Սուրամ երկիրը և լեռը

⁶⁵ «История Грузии князя С. Баратова», СПб., 1865, с. 55.

⁶⁶ И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 222.

⁶⁷ «Народы Кавказа», 1, М., 1960, с. 28.

⁶⁸ Նույն տեղում, էջ 27:

⁶⁹ Н. Я. Марр, История термина «Абхаз» [«Известия императорской Академии наук» (այսուհետև՝ «Известия»), СПб., 1912, с. 705], նույնի՝ Из поездок в Сванию (Христианский Восток, II, 1913, с. 22—23); նույնի՝ К дате эмиграции мосохв из Армении в Сванию [«Известия», 1916, (брош.), с. 1690]; Л. Меликсет-Бек, Несколько слов о термине «сомех» («Христианский Восток»), 1918, с. 93—94), նույնի՝ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, Երևան 1934, էջ 178, Г. А. Капанцян, Хайаса-колыбель армян (этногенез и их начальная история), Ереван, 1947, с. 146. Ի. Դյակոնովը մեսխ > սոմեխ (ի) անցումը, թեև համարում է նվազ հավանական, բայց և այնպես չի ժխտում նման հնարավորությունը (տե՛ս И. М. Дьяконов, Предыстория..., с. 204 прим. 113):

⁷⁰ Ստրաբոնը, նկարագրելով Հայաստանի հյուսիսային սահմանները, գրում է. «...Կովկասը (իսոթը Մեծ Կովկասյան լեռների մասին է—Վ. Գ.) հասնելով Հայաստանին՝ միանում է Մոսիկյան (Մոսխական—Վ. Գ.) ...լեռներին (Strabo. XI, 14): Գ. Ա. Ղափանցյանը այս առթիվ գրել է. «Մեսիական սարերը իբերներին սահմանադատել են հայերից» [«Հայոց լեզվի պատմություն (հին շրջան)», Երևան, 1961, էջ 55, ծան. 1]:

⁷¹ Եթիույան ցեղերին հայկական համարելը հիմնավորվում է KURÉtiu > Հայք անցմամբ, որն ապացուցվում է բառասկզբի e > ա, հնի. —t— հայ. —յ—, —lu/— հնի. սեռ. հոլ. —*i/lo/ > հայ. սեռ. հոլ. —ոյ վերջածանցի հնչյունափոխությամբ, հաճականի և -ք տեղանվանակերպ, ցուցիչի հավելմամբ՝ Հայ'յոք > Հայք-հայ'յոց:

(լեռնաշղթան), որի անունը պահպանվել է առ այսօր համանուն լեռնաշղթայի, լեռնաշղթայի, լեռնանցքի և գետի անուններում:

4. ^{KUR}Aria /վկայված է եղակի թվի բացառական-դործիական հոլովով/

^{KUR}A-ri-a-i-ne ձևով >Արենի:

Ներկայիս Մարտունու շրջանի Ծովինար գյուղից հայտնաբերված Ռուսա I-ի արձանագրության⁷² մեջ, ի թիվս շորս ծովամերձ երկրների, որոնք հիշատակված են նաև Սարգուրե II-ի տարեգրությունում⁷³, վկայված են ես 19 երկրներ, որոնք տեղագրվում են ոչ թե Սևանա լճից արևելք⁷⁴, այլ հարավ և հարավ-արևելք, այն է՝ Եղեգիս և Արփա գետերի վերին հոսանքների շրջանում, ինչպես նաև Որոտան⁷⁵ և Աղավնո լճագարո՝ գետերի ավազանում, այսինքն՝ պատմական Սյունիքի և Արցախի տարածքներում: Նման անդադրություն ճշտությունը հիմնավորվեց այդ 19 երկրներից մեկի՝ ^{KUR}Guria-ի

նույնացմամբ հետագայի Գորիսի հետ, որի ընթացքում տրվեց նաև ^{KUR}Guria >Գորիս զուգահեռի լեզվական հիմնավորումը⁷⁶: Վկայված մյուս երկրներից մի քանիսի անունները ևս, ենթարկվելով հնդեվրոպական հայերենին բնորոշ օրինաչափ ձևափոխությունների, պահպանվել են վերոհիշյալ տարածքներում (քաղաքանուն, գյուղանուն) և հասել մինչև մեր օրերը՝ ^{KUR}Aria >Արենի գյուղահեռն անցկացնելու համար հավելի է առնված ոչ միայն լեզվական անցման հնարավորությունը, այլ նաև այն հանգամանքը, որ այդ երկիրը մյուս 19 երկրների մեջ հիշատակված է վեցերորդը, այսինքն, ունի պետք է դանդաղ Սելիմի լեռնանցքի (որտեղով էլ Սարգուրե II-ը մուտք է գործել Սյունիքի տարածքը) և ^{KUR}Guria >Գորիսի միջև, որը արձանագրության մեջ հիշատակված է առանձին երկրորդը:

Պետք է կարծել, որ Ծովինարի արձանագրությունը կաղմելիս որոշակի հերթականություն է պահպանվել գրված երկրները թվարկելիս: Այդ իսկ առումով հնարավոր ենք համարում անցկացնել ^{KUR}Aria >Արենի գյուղահեռը: Անցումը կարող էր կատարվել հետևյալ կերպ. ինչպես գիտենք, սեպտգիր վկայված տեղանունների բառավիճիկ — ia-ն հայերենում կանոնավոր կերպով տալիս է -ի (օր.՝ ^{KUR}Teria >Տրի⁷⁷, ^{KUR}Giarnia >Գառնի⁷⁸, ^{KUR}Guria >Գորիս և այլն), ուստի առաջացել է *Ari /Արի/ ձևը, այսինքն՝ Aria >Արի, որին այնուհետև ավելանալով հին հայերենի -անի հոգնակիության վերջածանցը (հմտ. ավագ-անի, ընտր-անի, կան-անի և այլն), ստացվել է* Արի-անի, որտեղ -ի + ա կապակցությունը բառամիջում հայերենին բնորոշ հընչյունափոխությամբ պետք է տար-ե- (ինչպես օրինակ, գարի-ա-ջուր = գարե-

⁷² М. В. Никольский, Клинообразные надписи Закавказья («Материалы по археологии Кавказа», V, М., 1896, XVIII), УКН, № 266; НСНІ № 118, II.

⁷³ G. F. Lehmann-Haupt, GlCh. 132A, tabl. XXXVI; УКН, № 55, F, стр. 20—24; НСНІ, № 103, § 15, III.

⁷⁴ «Вестник древней истории», 1931, № 1, с. 66—67, УКН, с. 416—417, Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, с. 92; Н. В. Арутюнян, Бнай-или..., с. 281—282.

⁷⁵ Հ. Շ. Կարապյան, Արևելյան Հայաստան..., էջ 64—65.

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Մ. Տ. Երեմյան, Ն. Մաքր և VII դարի հայոց «Աշխարհացոյցը», էջ 82:

⁷⁸ Н. В. Арутюнян, Бнайили..., էջ 427—428.

շուր, բարի-ա-կամ=բարեկամ, URU Erūla > * Երգի+աւան+ք=Երգեւանք,
URU Urkla > Արքի+աւան=Արքեւան), հետեւաբար կստացվեր Արենի, որը
վկայված է⁷⁹ և տեղագրվում է ներկայիս Եղեգնաձորի շրջանի Արենի գյու-
ղի արևմտյան մասում գտնվող բլրի վրա (ավերակներն առ այսօր պահպան-
վել են): Արենին եղել է Արաքսի հովտից Սևանի ավազան և Ջանգեզուր տա-
նող բանուկ ճանապարհի հանգուցակետ և Շարուրի դաշտից Վայոց ձոր մըտ-
նող կիրճը փակող ռազմական հենակետ⁸⁰:

Ինչպես տեսնում ենք, թե լեզվական ճշգրիտ անցմամբ և թե նման տե-
ղագրության հնարավորությամբ, KUR Arla > Արենի զուգահեռ միանգամայն
ընդունելի կարելի է համարել, որը և իր հերթին նոր փաստարկ կարող է դառ-
նալ վերոհիշյալ 19 երկրները Սյունիքում և Արցախում տեղագրելու օգտին:

5. KUR Ela (վկայված է եզակի թվի բացառական-գործիական հոլովով՝
KUR E-la-i-ne ձևով⁸¹) > Հալէ: Այս անցումը կարող էր կատարվել հետևյալ
կերպ. ինչպես գիտենք, սեպագիր գրությունում մեզ հասած աեղանունների
առջևի E-ն հետագու հնչյունափոխության ընթացքում վերածվում է ա-ի, որն
ապացուցված է հիմնավորապես⁸² [օրինակ՝ KUR Enzite (աքաղական գրութ-
յամբ)⁸³ > Անձիտ⁸⁴, URU Erdua > Արդիթ, KUR Equ > Ակէ⁸⁵ և այլն], իսկ վերջին
a-ն հաճախ տալիս է ռէ⁸⁶ [օրինակ՝ D Nana (շումերական սիրո առավածու-
հի)⁸⁷ > հայ. Նանէ⁸⁸, Dada > Դադէ⁸⁹, հր. Eliša > հայ. Եղիշէ⁹⁰ և այլն]:

Այսպիսով, կստացվի *Ալէ, որին ավելանալով հ-աճականը, ստացվել է
Հալէ ձևը, որը և վկայված է Սյունիքի Հաբանդ գավառի գյուղերի շարքում⁹¹,
Հալէ անունից է առաջացել Հալիձոր գյուղանունը, որը գտնվում է Գորիսից
12 կմ հարավ-արևմուտք, Որոտան գետի ձախ ափին⁹²:

6. KUR Sila (վկայված է եզակի թվի բացառական-գործիական հոլովով՝
KUR Ši-la-a-l-né⁹³ ձևով) > Շաղատ: Այս անցումը կատարվել է I>a հնչյունա-
փոխությամբ (օրինակ՝ Ջիհան < պրո. Jihan «սշխար» բառից > հայ. Ջահան,

79 Ս տ ե փ ա ն ն ո ս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1911, էջ 512:

80 «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 11, Երևան, 1976, էջ 22:

81 УКН, № 266, стр. 8.

82 Ժ. Պ. Պատկանյան, Վանի արձանագրությունները... էջ 48, Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմություն, էջ 19, 223; И. М. Дьяконов, Материалы к фонетике урартского языка (Вопросы грамматики и истории восточных языков, М.—Л., 1958, с. 49); О. О. Карагёзьян, Локализация..., с. 69—71.

83 И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту («Вестник древней истории», 1951, № 2—4, № 27, с. 40.)

84 Ժ. Պ. Պատկանյան, Վանի արձանագրությունները, էջ 48:

85 О. О. Карагёзьян, Локализация..., с. 86.

86 Այս մասին հանգամանորեն տե՛ս նույն տեղում, էջ 86—88:

87 «Хрестоматия по истории Древнего Востока», М., 1963, с. 188, прим. 14.

88 «Ազատ քաղաքի Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1914, էջ 400:

89 Г. А. Капаницян, Хайаса..., с. 228.

90 Հ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ, Երևան, 1944, էջ 110:

91 Ս տ ե փ ա ն ն ո ս Օրբէլեան, նշվ. աշխ., էջ 517:

92 «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. VI, Երևան, 1980, էջ 49:

93 УКН, № 266, стр. 10.

Ճահան⁹⁴, Զիվան>Զավան⁹⁵, Շիտան>Շատան⁹⁶ և այլն) և -տ աճականի հավելմամբ, որը, հավանաբար, ունեցել է նաև աեղանվանակերտ նշանակութիւն (հմմտ. URU Irdua⁹⁷>Որդուա-տ, KUR Erta>Արի-տ, նույնացումը մերն է —Վ. Գ.), որից հետո ստացվել է Շաղատ վկայված ձևը⁹⁸, Շաղատը, գտնվելով Մղուկ գավառում, եղել է Սյունյաց աշխարհի մայրաքաղաք և եպիսկոպոսանիստ⁹⁹, Շաղատի բերդը, որի մասին հիշատակում է Մովսես Կաղանկատվացին¹⁰⁰, գտնվել է ներկայիս Սիսիանի շրջանի Շաղատ գյուղի արևելյան մասում բարձրացող երկու բլուրների վրա, որոնց հետքերը մինչև այժմ պահպանվել են: Լինելով Սյունյաց աշխարհի գրեթե կենտրոնում, Շաղատը Սյունիքից Վայոց ձոր ու Այրարատ, ինչպես նաև Նախիջևան ու Վասպուրական տանող ճանապարհների հանգուցաչետում էր գտնվում և, հավանաբար, այս ժամանակաշրջանից էլ սկսած, եղել է Սյունյաց աշխարհի նշանավոր կենտրոններից մեկը:

7. KUR Erta (վկայված է եզակի թվի բացառական-գործիական հոլովով՝ KUR E-ri-a-l-ne¹⁰¹ ձևով)>Արիտ: Ուրարտերենով վկայված տեղանունների առկա ձայնավոր e-ն և բառավերջի ia-ն համապատասխանաբար հայերենում տալիս են ա-և-ի (ինչպես այդ մասին ասվեց վերևում), որից հետո կստացվի *Արի ձևը և որին գումարվելով -տ տեղանվանակերտ ցուցիչը (տե՛ս վերևում) ստացվել է Արիտ ձևը, որը հիշատակվում է Սյունիքի Մղուկ գավառում, որպես գյուղ¹⁰² և ավան¹⁰³:

ВОПРОСЫ ТОПОНИМИКИ СТРАНЫ KUR Etiau КЛИНОПИСНЫХ ИСТОЧНИКОВ

В. А. ГАЙСЕРЯН

Р е з ю м е

В клинописных источниках, относящихся к стране KUR Etiau, упомянуто около 130 топонимов, значительная часть которых сохранилась до наших дней, претерпев присущие для армянского закономерные индоевропейские языковые трансформации.

⁹⁴ Հ. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 298—299:

⁹⁵ Նույն տեղում, էջ 302:

⁹⁶ Նույն տեղում, էջ 162:

⁹⁷ Վկայված է Արգիշթի II-ի Սիսիանի նորահայտ արձանագրության 12-րդ տողում [տե՛ս Ն. Վ. Հարության, Արգիշթի II-ի նորահայտ սեպագիրը, էջ 93—104, նույնի՝ Новая урартская надпись из Сисяна («Древний Восток», 1983, № 4, с. 195—220)], Վ. Ա. Գալսեթյան, Արգիշթի II-ի Սիսիանի արձանագրությունը, էջ 67—79:

⁹⁸ Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 108—112, 326:

⁹⁹ Մտեփաննոս Օրբելիան, նշվ. աշխ., էջ 48:

¹⁰⁰ Մովսես Կաղանկատվացի, նշվ. աշխ., էջ 326:

¹⁰¹ УКН, № 266, стр. 11.

¹⁰² Մտեփաննոս Օրբելիան, նշվ. աշխ., էջ 229, 484:

¹⁰³ Նույն տեղում, էջ 322, 326:

К числу подобных топонимов можно прибавить следующие:

1. KUR_{Bute} > Բուդ-Բերդ, 2. URU_{Uzina} > Օձմն, 3. KUR_{Siremu} > Սիրամ, 4. KUR_{Aria} > Արհնի, 5. KUR_{Eria} > Արիա, 6. KUR_{Šila} > Շաղամ, 7. KUR_{Ela} > Հալէ (Հալիճոբ), а также URU_{Maqu} > Մակու:

Проведение подобных параллелей дает возможность уточнить местоположение этих стран и городов.

QUESTIONS OF TOPONYMY OF THE COUNTRY KUR_{Etiu} FROM CUNEIFORM INSCRIBED SOURCES

V. A. GAISERIAN

S u m m a r y

About 130 toponymies are mentioned in cuneiform inscribed sources relating to the country of Kur Etiu; most of them are preserved until our days having undergone appropriate Indo-European linguistic transformation inherent to Armenian. It is possible to add the following to the number of similar toponymies.

1. KUR_{Bute} > Բուդ-Բերդ, 2. URU_{Uzina} > Օձմն, 3. KUR_{Siremu} > Սիրամ, 4. KUR_{Aria} > Արհնի, 5. KUR_{Eria} > Արիա, 6. KUR_{Šila} > Շաղամ, 7. KUR_{Ela} > Հալէ (Հալիճոբ), 8. URU_{Maqu} > Մակու:

Building such parallels makes it possible to accurately locate those countries and towns.